Հավելված N 1

Երևանի քաղաքապետի 2011 թվականի

փետրվարի.....-ի N .....-Ա որոշման

Կ Ա Ր Գ

Երևանի վարչական շրջանների ղեկավարների գործունեության գնահատման

1. Սույն կարգով կանոնակարգվում են Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից իրենց աշխատակազմերի միջոցով կատարված աշխատանքների գնահատման (այսուհետ՝ գործունեության գնահատում) հարաբերությունները:

2. Գործունեության գնահատման չափորոշիչներն ընդգրկում են.

1) <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով Երևանի քաղաքապետին վերապահված և Երևան քաղաքում տեղական ինքնակառավարումն արդյունավետ իրականացնելու նպատակով Երևանի վարչական շրջանների ղեկավարներին համապատասխան բնագավառներում օրենքով ուղղակի տրված լիազորությունները (գործունեության գնահատման հիմնական չափորոշիչ).

2) <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով Երևանի վարչական շրջանների ղեկավարներին պատվիրակվող Երևանի քաղաքապետի այլ լիազորությունները (գործունեության գնահատման լրացուցիչ չափորոշիչ):

3. Գործունեության գնահատման լրացուցիչ չափորոշիչները կարող են փոփոխվել՝ հաշվի առնելով Երևան քաղաքի հեռանկարային զարգացման ծրագրերը:

4.Գործունեության գնահատման չափորոշիչների միավորների թվաբանական հանրագումարը պետք է կազմի առավելագույնը 100 միավոր, իսկ գնահատումը պետք է կատարվի ամսական կտրվածքով՝ սույն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի N 1 աղյուսակում նշված ենթաչափորոշիչներով և տարեկան կտրվածքով՝ նույն հավելվածի N 2 աղյուսակում նշված ենթաչափորոշիչներով:

5. Յուրաքանչյուր բնագավառում վարչական շրջանի ղեկավարի կողմից՝ իր աշխատակազմի միջոցով կատարված աշխատանքների համար չափորոշիչի ընդհանուր առավելագույն գնահատականը 10 միավոր է, որն իրենից ներկայացնում է առանձին ենթաչափորոշիչների գնահատականների հանրագումար, իսկ ենթաչափորոշիչներից յուրաքանչյուրի գնահատման նվազագույն միավորը սահմանվում է 0 և յուրաքանչյուր գնահատման միավոր ավելանում է 0,5-ով:

Յուրաքանչյուր ենթաչափորոշիչի գնահատականը հաշվարկվում է սույն որոշման N2 հավելվածի հ.2 աղյուսակին համապատասխան, ըստ հետևյալ բանաձևի՝

$$X = \frac{YxZ}{100}$$

որտեղ՝ X-ը Երևանի վարչական շրջանի ղեկավարի կողմից՝ իր աշխատակազմի միջոցով կատարված յուրաքանչյուր ենթաչափորոշիչների գնահատականն է.

Y-ը՝ սույն որոշման N2 հավելվածի N N 1 և 2 աղյուսակների 3-րդ սյունակում նշված համապատասխան ենթաչափորոշիչի առավելագույն գնահատականն է.

Z-ը՝ սույն որոշման N2 հավելվածի N 3 աղյուսակին համապատասխան՝ յուրաքանչյուր ենթաչափորոշիչին համապատասխան կատարված աշխատանքի գնահատականն է:

Երևանի վարչական շրջանի ղեկավարի կողմից՝ իր աշխատակազմի միջոցով յուրաքանչյուր բնագավառում կատարված աշխատանքների ընդհանուր գնահատականը որոշվում է նշված բանաձևի հաշվարկման արդյունքում ստացված ենթաչափորոշիչների գնահատականների հանրագումարով:

6.Գործունեության գնահատման արդյունքներով մինչև 60 միավորը գնահատվում է անբավարար, 60-ից մինչև 85 միավորը՝ բավարար, 85 միավորից բարձրը՝ լավ:

7. Գործունեության գնահատման աշխատանքներն իրենց իրավասությունների շրջանակներում, ըստ բնագավառների, իրականացնում են աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումները՝ գնահատվող ժամանակահատվածում ստացված տեղեկությունների, կատարված համեմատական վերլուծությունների, ուսումնասիրությունների և դիտարկումների արդյունքների հիմքով:

8.Գործունեության գնահատման վերաբերյալ կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված տեղեկությունները հավաքագրվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքների կազմակերպման վարչությունում (այսուհետ՝ վարչություն), վարչության կողմից մշակված մեթոդական ուղեցույցներով նախատեսված պահանջներին համապատասխան՝ աշխատանքների կատարման որակի և արդյունավետության բարձրացմանը խոչընդոտող գործոնները բացահայտելու և գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկություններ ներկայացնելու, ինչպես նաև սույն որոշմամբ հաստատված N2 հավելվածի ձևին համապատասխան՝ վարչության գնահատականով դրանք Երևանի քաղաքապետի առաջին տեղակալին ներկայացնելու համար:

9. Կատարված աշխատանքների վերաբերյալ վարչական շրջանների ղեկավարների հաշվետվությունները մեկ օրինակից, թղթային տարբերակով և էլեկտրոնային կրիչով՝ հաշվետու ժամանակահատվածին հաջորդող 10-օրյա ժամկետում ներկայացվում են վարչություն՝ դրանցում ներառված տեղեկություններն ամփոփելու, ինչպես նաև գործունեության գնահատման բոլոր ցուցանիշների և բացատրությունների հիմքով վարչության կողմից 5-օրյա ժամկետում տեղեկանք-հիմնավորում՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալին ներկայացնելու համար:

10. Գործունեության արդյունքների գնահատականը Երևանի քաղաքապետին ներկայացնում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալը՝ այն նախապես քննարկելով Երևանի վարչական շրջանների ղեկավարների հետ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հ ա վ ե լ վ ա ծ N2
Երևանի քաղաքապետի 2011թ.

փետրվարի -ի

N -Ա որոշման

Չ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Չ Ն Ե Ր

Երևանի վարչական շրջանների ղեկավարների գործունեության գնահատման և դրանց հիման վրա ձևավորվող գնահատականների միավորների

Աղյուսակ N1

N⁰	Գնահատման ենթաչափորոշիչներ	Առավելագույն գնահատման միավորը	Միջինացված գնահատականը	Գործունեությունը գնահատող ստորաբաժանումները	
				Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում (ներ) ըստ բնագավառների	Աշխատակազմի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքների կազմակերպման վարչություն
1	2	3	4	5	6
1)	Սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի կազմակերպում և հսկողության իրականացում	0-10			
2)	Տեղական հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց նկատմամբ իրականացված աշխատանքների կազմակերպում	0-3			
3)	Ապօրինի հողօգտագործումների հայտնաբերման, կանխարգելման, կասեցման և վերացման ուղղությամբ վերահսկողության իրականացում	0-10			
4)	Մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների զանգվածային միջոցառումների կազմակերպման գործընթացների իրականացում	0-3			
5)	Աղբահանության կազմակերպում	0-10			
6)	Քաղաքային և համայնքային նշանակության փողոցների, հրապարակների, այգիների և ընդհանուր օգտագործման այլ հասարակական վայրերի մաքրման աշխատանքների իրականացում	0-10			
7)	Համատրիությունների հետ համագործակցության և աջակցության ուղղությամբ կատարված աշխատանքներ	0-3			
8)	Բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում	0-10			

9)	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հետ աշխատանքների կազմակերպում և համագործակցություն	0-3			
10)	Սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում պետության պատվիրակված լիազորությունների շրջանակներում	0-3			
11)	Սոցիալական աջակցության իրականացում համայնքային ծրագրերի շրջանակներում	0-3			
12)	Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության իրականացման արդյունքում հայտնաբերված խախտումները և թերությունները	0-3			
13)	Առանց թույլտվության բացօթյա առևտուր իրականացնելու հայտնաբերված իրավախախտման փաստով պաշտոնատար անձանց և քաղաքացիների նկատմամբ կազմված վարչական իրավախախտումների արձանագրություններ	0-10			
14)	Ոչ սահմանված տեղերում առևտուր անելու հայտնաբերված իրավախախտման փաստով պաշտոնատար անձանց և քաղաքացիների նկատմամբ կազմված վարչական իրավախախտումների արձանագրություններ	0-3			
15)	Շենքերի, շինությունների ինքնակամ կառուցման կասեցման և ինքնակամ կառույցների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքներ	0-10			
16)	Բնակիչների ընդունելության գործընթացի իրականացում	0-3			
17)	Աշխատակազմում մուտքագրված փաստաթղթերի կատարողականի գնահատման գործընթացի իրականացում	0-3			

Աղյուսակ N2

N՞	Գնահատման չափորոշիչներ և ենթաչափորոշիչներ	Առավելագույն գնահատման միավորը	Միջինացված գնահատականը	Գործունեությունը գնահատող ստորաբաժանումները	
				Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում (ներ) ըստ բնագավառների	Աշխատակազմի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքների կազմակերպման վարչություն
1	2	3	4	5	6
1.	**Ֆինանսների բնագավառում կատարված աշխատանքների լիարժեքություն**	10			
1)	Երևանի բյուջեով վարչական շրջանի ղեկավարի լիազորությունների իրականացման համար հատկացված միջոցների տնօրինման և դրանց նպատակային օգտագործման ապահովման գործընթացի կազմակերպում	0-2,5			

2)	Սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի կազմակերպում և հսկողության իրականացում	0-2,5			
3)	Տեղական հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց նկատմամբ իրականացված աշխատանքների կազմակերպում	0-2,5			
4)	Երևան քաղաքի բյուջեով վարչական շրջանների մասով գնման գործընթացներում մասնակցության լիարժեքության ապահովում	0-2,5			
2.	**Հողօգտագործման բնագավառում կատարված աշխատանքների լիարժեքություն**	**10**			
1)	Վարչական շրջանի սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացում	0-2,5			
2)	Հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացում	0-2,5			
3)	Ապօրինի հողօգտագործումների հայտնաբերման, կանխարգելման, կասեցման և վերացման ուղղությամբ վերահսկողության իրականացում	0-2,5			
4)	Հողի բերրի շերտի օգտագործման նկատմամբ հսկողության իրականացում	0-2,5			
3.	**Մշակույթի բնագավառում կատարված աշխատանքների լիարժեքություն**	**10**			
1)	Մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների զանգվածային միջոցառումների կազմակերպման գործընթացների իրականացում	0-2			
2)	Ազգային մշակույթին և արվեստին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող իրականացված ծրագրերը	0-2			
3)	Ազգագրական համույթներին, թատերական խմբերին, կիրառական արվեստի վարպետների գործունեությունը խթանող ծրագրերի իրականացում	0-2			
4)	Երաժշտական և արվեստի դպրոցների գործունեության արդյունավետության ուղղությամբ իրականացված աշխատանքներ	0-2			
5)	Մշակույթի տների և կենտրոնների, գրադարանների գործունեության արդյունավետության ուղղությամբ իրականացված աշխատանքներ	0-2			
4.	**Կոմունալ տնտեսության բնագավառում կատարված աշխատանքների լիարժեքություն**	**10**			

1)	Աղբահանության կազմակերպում	0-2,5			
2)	Քաղաքային և համայնքային նշանակության փողոցների, հրապարակների, այգիների և ընդհանուր օգտագործման այլ հասարակական վայրերի մաքրման աշխատանքների իրականացում	0-2,5			
3)	Համատրիությունների հետ համագործակցության և աջակցության ուղղությամբ կատարված աշխատանքներ	0-2,5			
4)	Բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում	0-2,5			
5.	**Կրթության բնագավառում կատարված աշխատանքների լիարժեքություն**	**10**			
1)	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հետ աշխատանքների կազմակերպում և համագործակցություն	0-2			
2)	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարման նկատմամբ հսկողության իրականացում	0-2			
3)	Նախադպրոցական կրթություն ստանալու համար պայմանների ապահովման ուղղությամբ գործընթացի կազմակերպում	0-2			
4)	Նախադպրոցական ուսումնական հաստատություններում փորձարարական և նորարարական գործունեության իրականացման գործընթացի կազմակերպում	0-2			
5)	Նախադպրոցական ուսումնական հաստատություններում նախադպրոցական կրթության զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքների մասնակցության ապահովում	0-2			
6.	**Առողջության և ֆիզիկական կուլտուրայի բնագավառում կատարված աշխատանքների լիարժեքություն**	**10**			
1)	Բժշկությունը նախադպրոցական և դպրոցական հաստատություններում, վարչական շրջանի բնակչության ֆիզիկական ակտիվության, առողջության և ակտիվ կենսակերպի ամրապնդմանը նպաստող հայեցակարգի մշակում և միջոցառումների կազմակերպում	0-2			

2)	Խաղահրապարակների, սպորտով զբաղվելու գոտիների պահպանման, սահադաշտերի, լողավազանների և ֆիզկուլտուրայով ու սպորտով զբաղվելու հնարավորությունների ավելացմանն ուղղված գործընթացի իրականացում	0-2			
3)	Արտադպրոցական մարզական պարապմունքների անցկացման, խմբերի և խմբակների ձևավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների իրականացում	0-2			
4)	Նախադպրոցական ուսումնական կազմակերպություններում անվտանգ և զվարճալի խաղերի կազմակերպման ծրագրերի մշակում և իրականացում	0-2			
5)	Բնակչության ֆիզիկական ակտիվության ամրապնդմանն ուղղված ներդրումային ծրագրերի մշակում	0-2			
7.	**Սոցիալական ապահովության բնագավառում կատարված աշխատանքների լիարժեքություն**	**10**			
1)	Սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում պետության պատվիրակված լիազորությունների շրջանակներում	0-2			
2)	Սոցիալական աջակցության իրականացում համայնքային ծրագրերի շրջանակներում	0-2			
3)	Սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառման, մարդասիրական օգնության բաշխման աշխատանքների իրականացում	0-2			
4)	Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեության կազմակերպման գործընթացի իրականացում	0-2			
5)	Գործազուրկների հաշվառման և բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ գործընթացին աջակցության ցուցաբերում	0-2			
8.	**Առևտրի և սպասարկման բնագավառում կատարված աշխատանքների լիարժեքություն**	**10**			
1)	Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության իրականացման արդյունքում հայտնաբերված խախտումները և թերությունները	0-2			

2)	Առանց թույլտվության բացօթյա առևտուր իրականացնելու հայտնաբերված իրավախախտման փաստով պաշտոնատար անձանց և քաղաքացիների նկատմամբ կազմված վարչական իրավախախտումների արձանագրություններ	0-2			
3)	Առևտրի, հանրային սննդի ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելու հայտնաբերված իրավախախտման փաստով պաշտոնատար անձանց և քաղաքացիների նկատմամբ կազմված վարչական իրավախախտումների արձանագրություններ	0-2			
4)	Ոչ սահմանված տեղերում առևտուր անելու հայտնաբերված իրավախախտման փաստով պաշտոնատար անձանց և քաղաքացիների նկատմամբ կազմված վարչական իրավախախտումների արձանագրություններ	0-2			
5)	Հասարակական վայրերում լռության խախտման հայտնաբերման իրավախախտման փաստով պաշտոնատար անձանց և քաղաքացիների նկատմամբ կազմված վարչական իրավախախտումների արձանագրություններ	0-2			
9.	**Քաղաքաշինության բնագավառում կատարված աշխատանքների լիարժեքություն**	**10**			
1)	Շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետ-տահատակագծային առաջադրանքով, քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում	0-2,5			
2)	Վարչական շրջանի տարածքում տեղադրված գովազդային վահանակների հաշվառման և գույքագրման գործընթացի իրականացում	0-2,5			
3)	Անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի կողմից հարակից տարածքների պարտադիր բարեկարգման գործընթացի իրականացման վերահսկողություն	0-2,5			
4)	Շենքերի, շինությունների ինքնակամ կառուցման կասեցման և ինքնակամ կառույցների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքներ	0-2,5			

10.	**Բնակիչների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում կատարված աշխատանքների լիարժեքություն**	**10**			
1)	Բնակիչների ընդունելության գործընթացի իրականացում	0-2			
2)	Աշխատակազմում մուտքագրված փաստաթղթերը քննարկելու և ընթացք տալու հարցերում քաղաքացիների իրավունքների պաշտպանության ապահովման գործընթացի իրականացում	0-2			
3)	Աշխատակազմում մուտքագրված փաստաթղթերի կատարողականի գնահատման գործընթացի իրականացում	0-2			
4)	Խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված լիազորությունների իրականացում	0-2			
5)	Ընդունված որոշումների և կարգադրությունների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը	0-2			

Աղյուսակ N 3

Կատարման որակ / Կատարման ժամկետ	**Կատարված է առանց թերությունների**	**Կատարված է ոչ էական թերություններով**	**Կատարված է էական թերություններով**	**Կատարված չէ**
Սահմանված ժամկետին	100	90	75	0
Սահմանված ժամկետի ոչ էական բացթողումներով	95	85	70	0
Սահմանված ժամկետի էական բացթողումներով	80	75	0	0

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ